

ՍՈՐԳԻՍ Վ. ՍՈՂԷԹՃԻ ԳՆՍՊՈՐԵԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵԹՂԵՀԵՄԻ (1651-1731)

Սարգիս Եւդոկիացի (Թոխաթեցի), Դասապարեան, Եպիսկոպոս Բեթղեհեմի, Սա-
 յէթճի (Սահաթճի) մականուանեալ, 1684—
 1690ի միջոցները Կ.Պոլսոյ մէջ գործող գլխա-
 ւոր կաթողիկէներէն էր. ինքն էր առաջին ան-
 գամ «կաթողիկ» եւ «հերձուածող» անուանա-
 կոչութիւնը դնող՝ Կ.Պոլսոյ կաթողիկէ եւ ոչ
 կաթողիկէ Հայերը զանազանելու համար (Չամ-
 շեան, Գ. էջ 721, առնլով Երեմիա Չելէպիէն,
 1690, անդ էջ 722): Ցայսօր իր մասին
 գիտցուածն էր ասկէ զատ՝ նաեւ այն թէ
 1714ին Հայոց Պատրիարքին կողմանէ թիարան
 նետուած էր, եւ մահուրնէ ազատելու համար
 տաճկացած (Չամշեան, Գ. 760): Ասոնց վրայ
 վերջերս կը յաւելլու Ա. Աղեքսանդրեան (Հա-
 մառօտ Պատմ. 12 կաթողիկոսաց, Վենետ. 1906,
 էջ 17), թէ 1742ին դեռ Հռոմ էր Սարգիս
 եւ իր ուրացող ընկերն Երեմիա Եպ., երբ Աբրա-
 համ Արծիւեան, առաջին կաթողիկոսն Հայոց
 ուղղափառաց, Հռոմ գտնուեցաւ: Վերջին
 տեղեկութիւնս սխալ է, ինչպէս հիմայ կը տես-